

տեսաւ չհերկարար մը որ իր արար կը չհերկէր հովիտներէն մէկուն մէջ. ըսաւ իր գերիին. Գնա այդ հերկարարին եւ առ տիրաւոր ու տիրահամներ (սակի) քեզի հետ. եւ եթէ ան հաց ունի իր բով՝ առ եւ դրամը իրեն տուր: Արդ չհերկարարը ունէր ընկեր մը որ պատճառաւ մը չհոսցած էր. եւ երբ գերին վար եկաւ չհերկարարին, անոր ընկերը չհոսուէն տեսաւ եւ հոն սպասեց, վախճալով իր ընկերոջ մօտեցող օտարականէն, եւ այսպէս գիտեց տեսնելու թէ վերջինս ինչ պիտի ընէր: Գերին բան մը մղեց եկող չհերկարարին, եւ ան հաց առնելով գերիին տուաւ, բայց իր ընկերը, չհոսուն մնալով, գիտեց եւ խորհեցաւ. Արդարեւ այս օտարականը անկէ իր հացը բռնուքեամբ կ'առնէ, որովհետեւ ինք չըխորհեցաւ թէ գերին փոխարէն բան մը տուած էր անոր: Ան վազեց պահակազօրքին եւ ըսաւ անոնց որ մարդ մը եկած էր սուրով եւ գէնքերով եւ թէ գաշտին մէջ գտնուող իր ընկերոջ հացը խլած էր: Պահակազօրքին հրամանատարը ձիավարեց. եւ որովհետեւ ասիկա տեղի կ'ունենար Իպն Մնրատի լեռներուն մէջ, այս տեղեկութիւնը զրկեց Սահլ Իպն Մնրատի, որ արազօրէն ձիավարեց մարդոցմով, մինչեւ որ անոր հասաւ: Երբ չհերկարարին հասաւ, գերին դեռ անոր հետ էր եւ ան (Սահլ) ըսաւ. Խօնչ կը կատարուի հոս:

Այս մարդը բովէ կ'անցնէր, ըսաւ չհերկարարը, հաց ուզեց եւ ես իրեն տուի:

Ո՞ւր է տէրդ, հարցուց Իպն Մնրատ գերիին՝ որ պատասխանեց. Հոն. եւ իր զըլուխը շարժեց այն կողմ: Իպն Մնրատ չտեսեցաւ անոր մինչեւ որ Բարակին հասաւ, որ վար կ'իջնէր (լեռնէն). եւ երբ գէմքը տեսաւ՝ ճանչցաւ, որով ան (Սահլ) իջաւ ձիէն եւ մօտենալով անոր ձեռքը համբուրեց: Որուն վրայ ան ըսաւ. Եղո՛ւկ, տէր իմ, ո՞ւր կ'երթաս:

Բարակ պատասխանեց. Ես կը ցանկամ Բիւզանդական երկիրը հասնիլ:

Դուն ոչ մէկ տեղ կամ անձ պիտի գրտնես որ պիտի նանչնայ քու իրաւունքդ

ինձմէ աւելի: Իպն Մնրատ պատասխանեց. եւ ո՞վ է որ աւելի արժանի ըլլայ քու այցելութեանդ: Դուն գիտես իմ դիրքս. յարաբերութիւն չկայ իմ եւ կեդրոնական (խալիֆայական) կառավարութեան միջեւ, եւ դուն չես գար կառավարութեան բարեկամներէն միոյն մօտ: Քեզի ծանօթ են իմ գործերս, իմ երկիրս եւ բոլոր ազնուականները որ հոս են: Արդարեւ, անոնք քու տանդ մարդիկն են, անոնցմէ որդիներ եկած են քեզի: Աստով ըսել կ'ուզէր՝ որ նախապէս երբ Բարակ կ'իմանար թէ ազնուականներէն մին գեղեցիկ դուստր մը կամ քոյր մը ունէր, մարդ կը զրկէր զայն ուղելով. եւ եթէ ազնուականը զայն զրկեր իրեն՝ շատ բարի, սակայն եթէ մերժէր՝ Բարակ անոր վրայ կը յարձակէր գիշերանց, կ'առնէր գեղուհին եւ ազնուականին բոլոր ստացուածքը եւ ուրիշ բաներ ու զանոնք բռնութեամբ իր երկիրը կը բերէր»:

«Եկուր ինձի հետ իմ բերդս, ըսաւ անոր Իպն Մնրատ, արդարեւ քու տունդ է եւ ես քու գերիդ: Այս ձմեռը հոն անցուր եւ յետոյ դուն կրնաս որոշել»:

«Բարակ դժուարութեան մէջ ինկած եւ յոյնած ըլլալով՝ վստահեցաւ Սահլ Իպն Մնրատի խօսքերուն եւ ըսաւ անոր. Լաւ չէ որ ես ու եղբայրս նոյն վայրին մէջ գտնուինք, որպէսզի եթէ ոեւէ մէկը մեզմէ մէկուն հանդիպի՝ միւսը դեռ կարենայ ապրիլ: Ես, ինքս, քեզի հետ կը մընամ, եւ Ապտ Ալլահ իմ եղբայրս, կ'երթայ Իպն Իստիֆանուսի, որովհետեւ չենք գիտեր թէ ինչ պիտի պատահի. եւ մենք յաջորդ չունինք որ մեր ընտանիքը պահէ»:

«Քու որդիներդ բազմաթիւ են, պատասխանեց Իպն Մնրատ: Բայց Բարակ պատասխանեց որ անոնց մէջ հատ մը իսկ չկար որ լաւ ըլլար. որով վճռած էր որ իր եղբայրը երթար Իպն Իստիֆանուսի բերդը, որուն ան կը վստահէր: Ասոր վրայ ան զնաց Իպն Մնրատի ամբողջ եւ առտուն Ապտ Ալլահ զնաց Իպն Իստիֆանուսի բերդը, մինչ Բարակ մնաց Իպն Մնրատի քով»: